«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Երևանի պետական համալսարանի

գիտական հարցերի գծով պրոռեկտոր,

ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու

_____ Ռ.Բարխուդարյան

02 փետրվար 2026թ.

**ԿԱՐԾԻՔ**

**առաջատար կազմակերպության**

***Նարեկ Գանձափարի Սարատիկյանի «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար***

Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Կառավարման և գործարարության» ամբիոնի 30.01.2026թ. կայացած նիստում (արձանագրություն թիվ 7):

Քննարկմանը մասնակցում էին «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հ. Հակոբջանյանը, ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Գ. Խաչատրյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Հ.Լ. Սարգսյանը, տ.գ.դ., տ.գ.դ., պրոֆեսոր Գ.Ի. Վարդանյանը, տ.գ.թ., պրոֆեսոր Ա.Ս. Սարիբեկյանը, տեխ.գ.թ., դոցենտ Հ.Վ. Զաքոյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Ս. Ալեքսանյանը,տ.գ.թ., դոցենտ Ն.Է. Միրզոյանը, տ.գ.թ., դոցենտ Ն.Ն. Խաչատրյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Ն. Ասրյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ռ. Գալստյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Գ. Գյոզալյանը, տ.գ.թ., դոցենտ Գ.Ս. Ասլանյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Ա. Բարխուդարյանը և ասիստենտ Ա.Ֆ. Մկրտչյանը:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում տարածքային ինովացիոն համակարգի (ՏԻՀ) ձևավորման և զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությանը: Ինովացիաները հանդիսանում են ժամանակակից տնտեսագիտության և սոցիալական քաղաքականության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն է: Գլոբալ տնտեսության կառուցվածքային վերափոխումները, գիտելիքահենք տնտեսության ձևավորումը, թվայնացման գործընթացների խորացումը և ինովացիաների դերը տնտեսական աճի և մրցունակության ապահովման գործում տարածքային ինովացիոն համակարգերի ուսումնասիրությունը դարձնում են խիստ կարևոր և առաջնային խնդիրներից մեկը:

Ժամանակակից տեսական և կիրառական ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայիս տնտեսական զարգացումները էականորեն կախված են ոչ միայն մակրոտնտեսական գործոններով, այլ տարածքային մակարդակում գիտության, կրթության, բիզնեսի և պետական կառավարման փոխազդեցության արդյունավետությունից: Այս համատեքստում տարածքային ինովացիոն համակարգերը հանդես են գալիս որպես տնտեսական աճի, տեխնոլոգիական առաջընթացի և սոցիալ–տնտեսական կայուն զարգացման առանցքային գործիք:

Մի շարք առաջատար երկրներ մեծ ուշադրություն են դարձնում տարածքային ինովացիոն համակարգի զարգացմանը՝ այն դիտարկելով որպես երկրի տնտեսության հավասարաչափ զարգացման, սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման, մարդկային կապիտալի կուտակման, արտագաղթի ծավալների կրճատման ու ապակենտրոնացման հիմնական միջոցներից մեկը: Տարածքային ինովացիոն համակարգի դերը խիստ կարևոր և կենսական նշանակություն ունի նաև ՀՀ-ի համար: Ունենալով կենտրոնացման բարձր մակարդակ հատկապես մարզային բնակչության շրջանակներում՝ ՏԻՀ-ը կարող է դիտարկվել վերոնշյալ խնդիրների լավագույն լուծում: Միևնույն ժամանակ, ՏԻՀ ձևավորումը և զարգացումը բխում է ՀՀ Կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրից, որտեղ

զգալի նշանակություն ունեն երկրի սոցիալ-տնտեսական խնդիրները, մարդկային կապիտալի զարգացումը, տարածքային տնտեսության և գիտելիքահենք տնտեսության զարգացման գործոնները: ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված չեն անհրաժեշտ դրույթներ:

Հայաստանի Հանրապետությունում տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման և կառավարման հիմնախնդիրները դեռևս գիտական մակարդակում բավարար չափով ուսումնասիրված չեն: Չնայած վերջին տարիներին առկա են առանձին քաղաքական նախաձեռնություններ, ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորման փորձեր և ոլորտային ծրագրեր, այնուամենայնիվ, դրանց համակարգված գիտական վերլուծությունը, գնահատումը և զարգացման մեխանիզմների առաջարկումը սահմանափակ են: Ներկայացված ատենախոսությունը ուղղված է վերոնշյալ խնդիրների ուսումնասիրությանը՝ ապահովելով թեմայի բարձր արդիականությունը և գիտական նշանակությունը:

Ատենախոսության նպատակը ոչ միայն տարածքային ինովացիոն համակարգերի համակողմանի ուսումնասիրությունն ու ներկայացումն է, այլ նաև պետական քաղաքականության և բիզնես միջավայրի արդյունավետության բարձրացման համար գործնական լուծումների առաջադրումը՝ դարձնելով այն արդիական և կիրառական թեմա ժամանակակից գիտական հետազոտությունների շրջանակում:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է վերլուծել ՀՀ տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման, զարգացման և կառավարման հիմնական ուղղությունները՝ հիմնվելով միջազգային փորձի, ՀՀ տնտեսության զարգացման արդի միտումների և տարածքային քաղաքականության առանձնահատկությունների վրա:

Սահմանված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- վերլուծել և ընդհանրացնել ՏԻՀ-ի զարգացման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- ուսումնասիրել միջազգային փորձը՝ ՏԻՀ-ի կառավարման մոդելների համեմատական վերլուծության միջոցով,
- բացահայտել ՀՀ-ում ՏԻՀ-ի ձևավորման հիմնական խոչընդոտներն ու զարգացման գործոնները,
- մշակել և հիմնավորել ՏԻՀ-ի զարգացման ու կառավարման նոր մոտեցումներ՝ հիմնվելով կատարողականի առանցքային ցուցիչների վրա,
- առաջարկել ՏԻՀ զարգացման հնարավորությունների գնահատման համընդհանուր ցուցիչ՝ հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչաիրավական գործոնների վրա:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության գիտական նորույթը ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման, զարգացման և կառավարման ուղղությամբ նոր մոտեցումների մշակումն է, որն արտահայտվում է հետևյալ դրույթներով.

- առաջարկվել է ՏԻՀ-ի կառավարման ինստիտուցիոնալ մոտեցում, հաշվի առնելով տարածաշրջանային ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորման միջազգային առաջավոր փորձը, պետական և մասնավոր հատվածի ներդաշնակ համագործակցությունը, ինչպես նաև տարածքային ինովացիոն գործունեության խթանման նպատակով պետական արդյունավետ քաղաքականության միջամտությունը:
- ՏԻՀ զարգացման գնահատման համար մշակվել է Տարածքային ինովացիոն ներուժի բազմաչափ գնահատման ընդլայնված մոդել, որը տնտեսավարման ավանդական գործոններից բացի (աշխատուժ, կապիտալ) ներառում է ՏԻՀ-ի առանցքային բաղադրիչներ՝ գիտահետազոտական ներդրումներ, մարդկային կապիտալ, ինովացիոն ենթակառուցվածքներ, պետական աջակցություն և տեխնոլոգիական առաջընթաց, հնարավորություն ընձեռելով հիմնավորելու

տարածքային ինովացիոն ռազմավարական կառավարման նպատակահարմարությունը:

▪ մշակվել է ՏԻՀ զարգացման հնարավորությունների համընդհանուր ցուցիչ, հիմնված տարածքային ինովացիաների իրականացման ռեսուրսային հնարավորությունների, ինչպես նաև կազմակերպչահիրավական գործոնների վրա, գնահատելու համար կառավարչական գործառույթների ընթացքը տարածքային ինովացիաների գեներացման, ներդրման կազմակերպման ու վերահսկողության, ինչպես նաև սպառման խթանման շղթայում:

▪ առաջարկվել է տարածքային ինովացիոն համակարգի կառավարման նոր մոդել՝ կատարողականի առանցքային ցուցիչներով, որը հնարավորություն է ընձեռում մի կողմից ապահովելու ՏԻՀ-ի գործունեության աջակցող գործառույթների արդյունքային պարբերական չափելիություն, մյուս կողմից, դրա հիման վրա կայացնելու տարածքային ինովացիոն գործունեության առաջընթացին նպաստող համապատասխան կառավարչական որոշումներ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատության ընդհանուր ծավալը կազմում է 145 էջ՝ առանց գրականության ցանկի և հավելվածների: Աշխատանքը պարունակում է 13 գծապատկեր, 17 աղյուսակ, գրականության ցանկում ներառված են 99 անուն գրականություն, 17 նորմատիվ-իրավական փաստաթուղթ, 17 համացանցային կայք: Առկա է նաև 4 հավելված:

**«Ներածության»** Ատենախոսության ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակները և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև դրանց գիտագործնական նշանակությունը:

**Ատենախոսության առաջին՝ «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման սոցիալ-տնտեսական նախադրյալները»** գլխում իրականացվել է տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման և զարգացման տեսական–մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրություն և խնդրի գիտական ուսումնասիրության մակարդակի գնահատում: Համակողմանիորեն վերլուծվում են ինովացիաների, գիտելիքահենք տնտեսության և տնտեսական զարգացման փոխկապակցվածության վերաբերյալ ժամանակակից տեսական մոտեցումները՝ հիմնվելով առաջատար միջազգային և տեղական գիտական աղբյուրների վրա:

Հեղինակը համակարգված կերպով ներկայացնում է ազգային և տարածքային ինովացիոն համակարգերի հայեցակարգերի ձևավորման պատմական զարգացումը, դրանց էվոլյուցիան և հիմնական առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տարածքային ինովացիոն համակարգի էության բացահայտմանը, դրա կառուցվածքային տարրերի սահմանմանը և ինովացիոն գործընթացների կազմակերպման առանձնահատկություններին տարածքային մակարդակում:

Վերլուծվում են տարածքային ինովացիոն համակարգի հիմնական բաղադրիչները՝ գիտակրթական համակարգը, մասնավոր հատվածը, ինովացիոն ենթակառուցվածքները, ֆինանսական և ինստիտուցիոնալ գործոնները, ինչպես նաև դրանց միջև առկա փոխազդեցության մեխանիզմները: Հեղինակը հիմնավորում է, որ տարածքային ինովացիոն համակարգի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն առանձին տարրերի զարգացման մակարդակով, այլ դրանց համագործակցության աստիճանով և որակով, ինչպես նաև կառավարման համակարգվածությամբ:

Առաջին գլխում կարևոր տեղ է հատկացվում նաև տարածքային ինովացիոն համակարգերի զարգացման միջազգային փորձի տեսական ընդհանրացմանը: Վերլուծվում են առաջատար երկրների և տարածաշրջանների մոդելները, ներկայացվում են դրանց առանձնահատկությունները, առավելություններն ու սահմանափակումները, ինչը հնարավորություն է տալիս ձևավորելու համադրելի և կիրառելի մոտեցումներ ՀՀ իրողությունների համար:

Առաջին գլուխը ձևավորում է ատենախոսության ամբողջ տեսական և մեթոդաբանական հիմքը՝ սահմանելով հիմնական հասկացությունները, հետազոտական տրամաբանությունը և վերլուծության շրջանակը: Ներկայացված տեսական ընդհանրացումները և եզրահանգումները հիմք են հանդիսանում հետագա գլուխներում իրականացվող էմպիրիկ ուսումնասիրությունների և գործնական առաջարկությունների համար:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում»** գլխում ներկայացվել է տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման տեսական-մեթոդաբանական հիմքերի և միջազգային փորձի համակողմանի ուսումնասիրությանը: Համակարգված կերպով ներկայացվել են ինովացիոն համակարգերի զարգացման վերաբերյալ ժամանակակից մոտեցումները՝ ընդգրկելով ազգային և տարածքային ինովացիոն համակարգերի հայեցակարգերը, դրանց կառուցվածքային տարրերը և փոխգործակցության մեխանիզմները:

Իրականացվել է տարածքային ինովացիոն համակարգի նշանակության, կառուցվածքի և գործառույթների խորքային վերլուծություն՝ առանձնացնելով գիտության, կրթության, բիզնեսի, պետական կառավարման առանձնահատկությունները և դերը տարածքային մակարդակում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ինստիտուցիոնալ գործոններին, սոցիալ-տնտեսական միջավայրին և տարածքային կառավարման առանձնահատկություններին, որոնք պայմանավորում են տարածքային ինովացիոն գործընթացների արդյունավետությունը:

Ուսումնասիրվում և ընդհանրացվում է առաջատար երկրների և տարածաշրջանների փորձը տարածքային ինովացիոն համակարգերի ձևավորման և կառավարման ոլորտում՝ ընդգրկելով ԵՄ երկրները, ԱՄՆ-ը և մի շարք ասիական առաջատար երկրների տնտեսություններ: Միջազգային փորձի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել այն հիմնական օրինաչափությունները և քաղաքական գործիքները, որոնք նպաստում են տարածքային ինովացիոն համակարգերի կայուն զարգացմանը և մրցունակության բարձրացմանը:

Երկրորդ գլխում ձևավորվում է այն տեսական և մեթոդաբանական հենքը, որի վրա հիմնվում են հետագա էմպիրիկ վերլուծությունները և կիրառական առաջարկները: Ներկայացված մոտեցումները կարևոր նշանակություն ունեն ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման գործընթացների գիտական գնահատման և զարգացման ուղղությունների սահմանման համար:

Ատենախոսության երրորդ՝ **«Տարածքային ինովացիոն համակարգի կառավարման բարելավման ուղիները ՀՀ-ում»** գլխում իրականացվել է Հայաստանի Հանրապետությունում տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման առանձնահատկությունների վերլուծություն՝ հիմնվելով վիճակագրական տվյալների, միջազգային ցուցանիշների և էմպիրիկ հետազոտությունների արդյունքների վրա: Իրականացվել է ՀՀ ինովացիոն ներուժի համալիր գնահատում՝ դիտարկելով մարդկային, գիտական, տեխնոլոգիական, ֆինանսական և այլ ինստիտուցիոնալ բաղադրիչները:

Հեղինակը վերլուծում է ՀՀ ինովացիոն համակարգի ներկայիս վիճակը՝ համադրելով այն միջազգային համադրելի ցուցանիշների հետ և բացահայտում է առկա հիմնախնդիրները, կառուցվածքային անհամաչափությունները և զարգացման սահմանափակումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում տարածքային տնտեսությանը, ինովացիոն ակտիվության կենտրոնացման խնդիրներին և ինովացիոն ենթակառուցվածքների զարգացման մակարդակին:

Մշակվում և կիրառվում են քանակական գնահատման մեթոդներ և մոդելներ, որոնց միջոցով ուսումնասիրվում է տարբեր գործոնների ազդեցությունը տարածքային ինովացիոն համակարգի արդյունավետության վրա: Ստացված արդյունքները հնարավորություն են տալիս բացահայտելու այն առանցքային գործոնները, որոնք էական դեր ունեն ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի զարգացման գործում:

Երրորդ գլխի շրջանակում ներկայացվում են նաև գործնական և քաղաքական առաջարկություններ՝ ուղղված ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի կառավարման կատարելագործմանը, ինովացիոն ներուժի արդյունավետ օգտագործմանը և տարածքային զարգացման քաղաքականության ամրապնդմանը: Առաջարկված մոտեցումները հիմնված են ինչպես տեսական վերլուծության, այնպես

էլ էմպիրիկ արդյունքների վրա և ունեն կիրառական նշանակություն ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունների մշակման գործընթացում:

Ատենախոսության **եզրակացություններում** ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարվել են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի արդյունավետության և որակի բարելավմանը:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված ատենախոսության վերաբերյալ առկա են նաև որոշակի թերություններ և բացթողումներ, որոնցից հիմնականներն են.

1. Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման վերաբերյալ հետազոտությունը կրում է հատվածական բնույթ՝ ավելի շատ հիմնված վերլուծության առարկայի վերաբերյալ հաշվետվությունների, միջազգային զեկույցների, ՀՀ պաշտոնական ռազմավարական փաստաթղթերի և այլ աղբյուրների արդյունքների վերարտադրության վրա: Օրինակ, հեղինակը նշում է. «Հարկավոր է դիտարկել տարբեր երկրների կողմից իրականացված միջոցառումները, արձանագրված արդյունքները և գիտական հետազոտությունների վերլուծությունները, որոնց ուսումնասիրությունների հիման վրա կարող ենք նշել ՏԻՀ-երի հետևյալ առանցքային բնութագրերը» (էջ 93): Աշխատանքը կշահեր, եթե հետազոտությունը կրեր առավել համակարգված բնույթ, իսկ դրանում վեր հանված միտումները, ազդեցության գործոնները, խնդիրները խարսխված լինեին երկարաժամկետ վիճակագրական տվյալների բազմակողմ վերլուծության վրա, իսկ դրանց լուծմանն ուղղված մոտեցումները և աշխատանքում առաջադրված նպատակին հասնելու ուղիները հիմնված լինեին վիճակագրական տվյալների նպատակային կիրառման վրա և ամրագրված լինեին փաստարկված դատողություններով:

2. Երկրորդ գիտական նորույթը հիմնավորման կարիք ունի: Հեղինակը նշում է, որ ՏԻՀ զարգացման գնահատման համար մշակվել է տարածքային ինովացիոն

ներուժի բազմաչափ գնահատման ընդլայնված մոդել, սակայն չի հիմնավորում, թե առաջարկվող մոդելն ինչով է տարբերվում տվյալ ոլորտում արդեն իսկ գոյություն ունեցող մոդելներից և մոտեցումներից: Առաջարկվող մոդելի տեսական հիմնավորումից զատ անհրաժեշտ էր առավել մանրամասն ներկայացնել և մեկնաբանել մոդելում ներառված գործոնների փոխազդեցության տրամաբանությունը:

3. Հեղինակի կողմից մշակվել է երկրների մրցունակության և տնտեսական աճի վրա գիտատեխնոլոգիական և ինովացիոն զարգացման ազդեցության գնահատման էկոնոմետրիկ մոդել, որի նպատակն էր, ինչպես նշվում է աշխատանքում, չափել երկրների մրցունակության և տնտեսական աճի վրա գիտատեխնոլոգիական և ինովացիոն զարգացման ազդեցությունը: Հեղինակի կողմից չի հիմնավորվում, թե ի՞նչ արդյունք է ապահովել այդ մոդելը ՀՀ տարածքային ինովացիոն համակարգի զարգացման գործում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության արժանիքները, այլ ակնկալում են, որ դրանք հաշվի կառնվեն հեղինակի կողմից իր հետագա հետազոտություններում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և արտացոլում հետազոտության հիմնական դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով՝ Նարեկ Գանձափարի Սարատիկյանի «Տարածքային ինովացիոն համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ,
տ.գ.թ., դոցենտ՝ Ա. Հ. Հակոբջանյան

Գրախոսներ՝
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի
պրոֆեսոր, տ.գ.թ.՝ Ա. Ս. Սարիբեկյան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի
«Կառավարման և գործարարության» ամբիոնի
ասիստենտ, տ.գ.թ.՝ Ն. Մ. Սահակյան

Ա.Հ. Հակոբջանյանի, Ա.Ս. Սարիբեկյանի, Ն.Մ. Սահակյանի ստորագրությունները հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, բ.գ.թ., դոցենտ Մ. Վ. Հովհաննիսյան

02.02.26թ.